ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վարդենիս **07/06/2022**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 24 անդամներ:

Բացակա էին՝ Մելանյա Եփրեմյանը, Արտակ Մանուկյանը, Արամ Մելքոնյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ահարոն Խաչատրյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կամո Զարոյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով և Մաթոս Հակոբյանի դիմումը համայնքի ավագանին որոշում է.

1.Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի սոցիալապես անապահով բնակիչ Մաթոս Հակոբյանին ուսման վարձավճարի համար պահուստային ֆոնդից հատկացնել 120000 /մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

2.Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի սոցիալապես անապահով բնակիչ Արմեն Մարտիրոսյանին գայլերի հարձակման հետևանքով կրած վնասի (ոչխարների անկման) համար պահուստային ֆոնդից հատկացնել 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Ձեկույցով հանդես եկավ համայնքի ղեկավարը ներկայացնելով հարցը: 24 կողմ 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց Մաթոս Հակոբյանին որպես աջակցություն փոխանցել ուման վարձ՝ 120000/հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ, իսկ Արմեն Մարտիրոսյանին 100000/մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ա/

Լսեցին

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ>> ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկությունը և ներկայացված ծրագիրը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից Տեղական ինքնակառավարման բարեփոխումների աջակցության (ՏԻԲԱ) ծրագրի շրջանակներում իրականացվող «Վարդենիս խոշորացված համայնքի էներգախնայողության, հանրային ծառայությունների բարելավման և ներհամայնքային տրանսպորտային համակարգի հիմնման ծրագիր» ծրագրի նոր ՆԽ կազմը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Տալ համաձայնություն համայնքի բյուջեից կատարելու 10% ներդրում՝ ՏԻԲԱ Ծրագրի պահանջներին համապատասխան

3. Ծրագրի ավարտից
հետո ստեղծված ենթակառուցվածքի շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում;

4. Ստեղծված ենթակառուցվածքը չօտարել, չսեփականաշնորհել կամ չօգտագործել այլ նպատակներով ծրագրի ավարտից հետո առնվազն 15 տարվա ընթացքում:

5. Հաստատել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից Տեղական ինքնակառավարման բարեփոխումների աջակցության (ՏԻԲԱ) ծրագրի շրջանակներում իրականացվող «Գեղամասար համայնքի հանրային ծառայությունների բարելավման և գյուղատնտեսության խթանման ծրագիր» ծրագրի նոր ՆԽ կազմը՝ համաձայն հավելված 1-ի:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը: Հարցի շուրջ ելույթով հանդես եկավ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ Վահե Սարգսյանը նշելով՝ ծրագրերում կատարվել են փոփոխություններ և ձեռք են բերվել նոր տեխնիկաներ (ցանկը կցվում է):
հարցը դրվեց քվեարկության և անցավ միաձայն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ և 90-րդ հոդվածի 6-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքում զբոսաշրջության կայուն զարգացման նպատակով պատմամշակույթային կառույցների շինարարական աշխատանքների ր տարածքների բարեկարգման նպատակող Վարդենիս համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից տրամադրել.

1)<<Սուրբ Վարդան>> սրբավայրի շինարարական աշխատանքներին 10.000000 (տասը միլիոն) ՀՀ դրամ:

2)Մաքենյաց վանքի տարածքի բարեկարգմանը-2.000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ:

3)Սոթքի <<Սուրբ Աստվածածին>> եկեղեցու տարածքի բարեկարգմանը 2.000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ:

4)Կարճաղբյուրի <<Քարե դուռ>> մատուռի տարածքի բարեկարգմանը 2.000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ:

5)Վարդենիսի <<Թուխ մանուկ>> մատուռի տարածքի բարեկարգմանը 1.000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

6)Ազատի <<Աստվածածին>> եկեղեցու տարածքի բարեկարգմանը 2.000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը: Հարցի շուրջ ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը նշելով, որ ընդգրկված չեն վարդենիս համայնքի բոլոր բնակավայրերում առկա պատմամշակույթային կառույցները: Ուստի առաջարկեց համապատասխան բաժնի կողմից վեր հանել բոլոր բնակավայրերում առկա կառույցները ավելի ճիշտ մոտեցում ցուցաբերելու համար: Առաջարկվեց բյուջեի հնարավորությունները հաշվի առնելով գումարներն ուղղել սուբվենցիոն ծրագրերի իրականացմանը, իսկ պատմամշակույթային կառույցների բարեկարգման աշխատանքները ներառել հնգամյա զարգացման ծրագրում և փուլ առ փուլ իրականացնել բարեկարգման աշխատանքներ:

Հարցը դրվեց քվեարկության՝ արդյուքում 10 կողմ 14 դեմ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց չընդունված:

Կողմ-10 Դեմ-14 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՑ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾ ՀԱՅՈՐԴԻՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածով և 25-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Սեպտեմբերի 21-ին՝ ՀՀ անկախության տոնի կապակցությամբ, Վարդենիս համայնքից Արցախյան գոյամարտում զոհված հայորդիների ընտանիքներին բյուջեի պահուստային ֆոնդից տրամադրել 50.000 -ական/հիսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցի շուրջ ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը տալով հարցի վերաբերյալ պարզաբանում, իսկ ավելի մանրամասն պարզաբանելու համար խոսքը տվեց Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանին: Սեյրան Գրիգորյանը ներկայացրեց բյուջեի հնարավորությունները նշված աջակցությունը ցուցաբերելու համար: Ելույթով հանդես եկավ Մուշեղ Շաբոյանը՝ ասելով, որ հարցը ներկայացնելիս հաշվի են առնվել բյուջեի ապառքները, ինչպես նաև հաշվի են առնվել բյուջեի սպասվելիք մուտքային գումարները:
Հարցի շուրջ ելույթ ունեցավ ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը ներկայացնելով բյուջեի ապառքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ըստ իրականացված ծրագրերի և մնացած չվճարված գումարների մասին: Հայտնեց, որ նախկինում իրականացված ծրագրերի մի մասը ավարտված են, մի մասը ոչ և գոյացել են խոշոր պարտքեր Վարդենիս համայնքի բյուջեում և առաջարկեց ելնելով բյուջեի հնարավորություններից ընդունել ճիշտ որոշում:
Հարցի շուրջ ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը ասելով, որ հարցը իրապես բոլորի համար մտահոգիչ է և առաջարկեց Արցախյան բոլոր պատերազմների ընթացքում զոհվածների ընտանիքներին տրամադրել 50000 /հիսուն հազար/-ական ՀՀ դրամ յուրաքանչյուրին: Հարցը դրվեց քվեարկության արդյունքում 24 կողմ 0 դեմ ձայներով համարվեց ընդունված:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Ա/

Լսեցին
<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ>> ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկությունը ՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն Բելլա Սարգսյանին նշանակելու որպես <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի քաղաքային մանկական գրադարան>> բյուջետային կազմակերպության տնօրեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

14 կողմ 10 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ա/

Լսեցին

<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ>> ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկությունը ՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն Քրիստինե Պետրոսյանին նշանակելու որպես <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի քաղաքային գրադարան>> բյուջետային կազմակերպության տնօրեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

14 կողմ 10 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՔՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով և ՀՀ հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝
Հանձնաժողովի նախագահ - Ահարոն Խաչատրյան - համայնքի ղեկավար

Անդամներ՝

Կարեն Մկրտչյան - համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Կամո Զարոյան - աշխատակազմի քարտուղար

Աբգար Աբգարյան - քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնի պետ

Սեյրան Գրիգորյան - ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ

Հրանտ Զարոյան - քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ

Սպարտակ Հովհանիսյան -ավագանու անդամ

Դավիթ Շահնազարյան -ավագանու անդամ

-ավագանու անդամ

2.Հանձնաժողովի անդամներից աճուրդավար նշանակել՝ Աբգար Աբգարյանին.

3.Հանձնաժողովի անդամներից արձանագրող նշանակել՝ Հրանտ Զարոյանին.

4.Բնակավայրերում մրցույթների կազմակերպման դեպքում հանձնաժողովի կազմում ընդգրկել նաև տվյալ բնակավայրի վարչական ղեկավարին:

Ելույթով հանդես եկավ Դավիթ Շահնազարյանը ներկայացնելով հանձնաժողովի գործունեության ընթացքը, առաջարկեց հանձնաժողովի կազմում ընդգրկել համապատասխան մասնագետներ և խմբակցությունների, մեկական ավագանու անդամ:
Ելույթ ունեցավ նաիրա Մանուչարյանը և հայտարարեց, որ նախկինում կայացվել է որոշում՝ մշտական հանձնաժողովների կազմում թեկնածու չառաջադրելու մասով:
Հարցը դրեց քվեարկության արդյունքում 14 կողմ 10 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53-Ա/

Լսեցին
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 7-ի հերթական նիստի օրակարգը բաղկացած 7 հարցից՝

<u>1.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՔՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ</u>
<u>2.<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ>> ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՏԵՂԱԿԱՆ, ՆՇԱՆԱԿԱԿԱՆ ՈՒՆԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ,</u>

ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
3.<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ>> ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՑ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾ ՀԱՅՈՐԴԻՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6.<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ>> ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
7.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2022 թվականի հունիսի 7-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու հերթական նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 25-ը: Նիստին մասնակցում էին աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչներ և այլոք: Նիստն իրավազոր է: Նիստը վարում է համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը: Համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը նիստը համարեց բացված: Ահարոն խաչատրյանը ներկայացրեց օրակարգը:
Օրակարգի վերաբերյալ ելույթ ունեցավ ավագանու անդամ Վարուժան Ավետիսյանը՝ առաջարկեց օրակարգից հանել <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԿԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԾԱԽՍԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> հարցը: Որոշվեց հարցը դնել քվեարկության և արդյունքում 14 կողմ 10 դեմ ձայների հարաբերակցությամբ հարցը հանվեց օրակարգից: 14 կողմ 10 դեմ ձայների հարաբերակցությամբ օրակարգը հաստատվեց:

Կողմ-14 Դեմ-10 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱՋՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԽՉԵՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՇԱԲՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԶԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ՋԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Կամո Հայրոյանը _____